

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ


Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

11 ՅՈՒՆԻՍԻՐ 1903

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



ՄԱՍԻՍ Շաբաթաբերի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասանման 12 Թրանկ կամ 5 բուլլի: Թղթաստանական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատուութեան չեն առնուիր:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, ղիւրամասչելի պայմաններով:

Զեոմբէ Կը ԾԱԽՈՒԻ ՀԱՏԲ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հասցէ

درعليه ده غاطه ده (ماسيس) غرضه سى اداره سى

ԽՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Դալարիս

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

1875

ՄԱՍԻՆ

52^{րդ} ՏԱՐԻ, Դ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 2

11 ՅՈՒՆՈՒԱՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գրական աշխարհին (հմբագրական) Տ. Ա. — Ներքի վրայ (Ոսանաւոր քարգմ.) Ա. Դ. Բ. Մ. ՓԱՆՈՍՆԱՆ : — Ոսանիկ Տէր Մարգարեանց (Դ. Յօդուած) ՄԷՐՍԷՏԷՍ : — Ասելուքիւն-
ներս . ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ : — Էջ մը օրագրես . Նոր Տարին . ՓԱՅԼԱԿ : — Գիտական
պատահիկներ . Վ. Ա. Գ. — Այծեմնիկի փուցը (Վեպ) ԱՆՏՐԷ ԹԷՌՈՒԷ : — Յուշահատ :

ԳՐԱԿԱՆ ԱԺԽԱՐՀԷՆ

Վերջապէ՛ս Պարոնեանի կենսագրութեան մէկ մասնիկը ունեցանք , մեծ երգիծաբանին մահէն աւելի քան տասը տարի ետքը : Եթէ այսքան երկար ժամանակամիջոցի մը պէտք ունեցաւ « քանքարաթաքոյց բանասէր » մը , — Բիւզանդիոնին լաւերով , — Մեծապատիւ մուրացկաններու հեղինակին « առաջին քայլեր » ուն վրայ գաղափար մը տալու համար կարճ յօդուածով մը , ուրեմն ի . դարուն կիսուն հազիւ պիտի աւարտի անոր կեանքին վերջին տարիներուն ու գրչի վերջին արտագրութիւններուն ուրուագիծը , ամբողջական հատոր մը կազմելով այնքան հեռաւոր թուականի մը ուր տարտամ կերպով յիշուի այլեւս Պարոնեանին անունը :

Այս գանդաղութիւնը , որուն խառնուելու իրաւունք չունինք , անցողաբար յիշել անցնելէ ուրիշ բան չենք կրնար ընել ի հարկէ — և այսքանն ալ անոր համար միայն որ Պարոնեանի մահուան յաջորդ օրն իսկ յայտարարուեցաւ մեր թերթերուն մէջ , ու անկէ ի վեր կը կրկնուի մեր գրական չրջանակներուն մէջ , թէ այդ հռչակաւոր կենսագրականը պատրաստուելու վրայ է : Այնպէս որ , բանասիրական աշխարհին համար իր մասնատոր կարեւորութիւնը ունի այդ կենսագրականին գէթ երեք էջերուն աւարտած ըլլալն ու

հրատարակուելը՝ երկարաշունչ աշխատութեան մը պէս : Զէ՞ մի որ « Սկիւրը դործին կէսն է » , կ'ըսէ հինցած առած մը :

Բարեբաղդաբար , տեսակէն մէջ միակն է՝ այնքան սարդ աշխատասիրութեան մը այսքան երկար ձգձգումը , և մեր միւս բանասէրներն ու կենսագիրները , — ճշմարտագէտ արժանի այդ պատուոյ տխրոսներուն , — նոյնքան աշխոյժ որքան ձեռնասութիւն կը դնեն իրենց ձեռնարկած դործերուն պատրաստութեանը մէջ , ինչպէս , օրինակի համար , Տոքթ . Վահրամ Թորգոմեան որ համեմատագէտ կարճ միջոցի մը մէջ հրատարակեց երկար շարք մը հայ բժիշկներու կենսագրութեան , սկսելով անոնց նախահայրերէն ու արդէն իսկ հասնելով մինչեւ Տոքթ . Նահապետ Ռուսինեան : Այդ կենսագրականները , բազմակողմանի ծանօթութիւններով լեցուն և հմուտ գրիչով մը գրուած , ճշմարիտ լոյս մը կը տփռեն մեր անհետացած գիտուններու կեանքին ու դործերուն վրայ , և սահմանուած են կարեւոր տեղ մը գրաւելու ժամանակակից հայ երկասիրութեանց մէջ՝ պատիւ բերելով իրենց հեղինակին : Ու հակադրութիւնը հոն է որ , բանասէր բժիշկը օր մը ընտա խօսեցնել չի տար իր այս գեղեցիկ աշխատութեանը վրայ զոր առաջ կը վարէ լուռ ու անխոնջ ուսումնաս

սիրութիւններով, իր բոլոր գոհացումը գըտնելով կատարուած գործին մէջ՝ փոխանակ կատարելի գործին հրապարակումին մէջ մնա-
փառութիւն մը փնտռելու :

Ուրիշ կենսագիր մը, Արշակ Ալպոյաճեան, կանուխէն հետեւող մըն է Տոքթ. Թորգոմեանի ընտրած գրական ուղիին, և Տիկին Սրբուհի Տիւսարի կենսագրութենէն ետքը՝ զոր ընծայեց մեզի սիրուն հատորիկով մը՝ կը խոստանայ հրատարակել Արմենակ Հայկունիի կենսագրութիւնը, աւելի՛ լայն սահմանի մը մէջ : Այդ կենսագրականէն նոյն մը տուաւ արդէն երիտասարդ բանասէրը Լոյսի բացառիկ թիւին մէջ, նկարագրելով « ներքին մարդը » որ այնքան հետաքրքրաշարժ էջ մը կը կազմէր Գեորգիանի Երեւանի հեղինակին կեանքէն : Մօտէն ճանչնալով Ալպոյաճեանը իբրեւ բարեկամ մը և իբրեւ աշխատակից մը Մասիսին, — ուր գրական ծածկանուն մը ընտրած է իրեն համար, — կը հաւատանք որ, իր կենսագրականին նօթերը ամբողջացնելուն պէս, պիտի ձեռնարկէ անոր խմբագրութեանը և 1903 տարին չաւարտած՝ պիտի աւարտի ու հրատարակուի գործը :

Չեմ գիտեր թէ այդ նօթերուն վրայ կըրնայ ըսն մը աւելցնել մանրամասն մը զոր Արմենակ Հայկունիին ժամանակակից անձ մը, գրչի մարդ մը՝ ինքն ալ, կը պատմէր անցեալ օր, հայ խմբագիրներու կեանքին նիւթական կողմին վրայ դարձող խօսակցութեան մը միջոցին : Ամէն պարագայի մէջ, կրնայ գաղափար տալ չորանի մը վրայ ուր լրագրութիւնը լուծ ու տեւական գործ մը չէր նկատուեր ընդհանրապէս, — թէ և հիմակ ալ այդ թեթիւ ըմբռնումին օրինակները կը տեսնենք երբեմն, — և խմբագրին ու ընթերցող հասարակութեան միջև տեսակ մը քեֆ-լիճսիզուքիւն կար որուն չնորհիւ՝ առաջինը՝ դրամական անձկութեան վայրկեանի մը մէջ, կը զաղբեցնէր յանկարծ իր թերթին հրատարակութիւնը, ու վերջինները՝ չգանգատուէ զատ՝ կը նորոգէին իրենց բաժանորդագրութիւնը, շատեր կրկին անգամ կը վճարէին, երբ վերստին երեւար ան : Հին լրագրութեան այս լայն բարեբեկէն ու հանրութեան այս ներդառն ընթացքէն ամէնէն աւելի

օգտուողներէն մէկը եղած էր Հայկունի որ շարաթաթերթ մը կը հրատարակէր : Այդ վիճակէրը « որուն անհանդարտ բնուորութիւնը շարունակական պայքարի մը վերածած էր իր կեանքը՝ թէ՛ հրապարակային գործունեութեան և թէ՛ անհատական ու գրական կեանքին մէջ » վիճարանութեան մը տաք մէկ միջոցին՝ յանկարծ կ'ընդհատէր իր պարբերականին հրատարակութիւնը, թուղթի և տպագրական ծախքերուն հայթայթման համար անհրաժեշտ եղող դրամական միջոցները սպառած ըլլալուն պատճառաւ : Երկրորդ կամ երրորդ անգամ ըլլալով պատահած էր այս ինքնարեւր բաց ակամայ դադարումը, և երկու ամիս մը անցած էր վերայէն, երբ լուր կը տարածուի թէ Հայկունի պիտի վերսկսի իր շարաթաթերթին հրատարակութեանը, լաւագոյն պայմաններու մէջ : Եւ իրաւ ալ, շատ չանցած կ'երեւայ առաջին թիւը, լաւագոյն թուղթի վրայ և խնամեալ կերպով :

Հոս, խօսքը կուտամ այս պարագաները պատմող բարեկամին, որուն անձնական յիշատակներուն մաս կը կազմէ անէքդուոր :

— « Այդ թուականին, տակաւին շատ եւ երկատարող, հաճոյք մը կը զգայի Արմենակ Հայկունիի դրամական կըրթալէն, ունի իսկ իր նեղութեան օրերուն մէջ ուր իր տանապանքը կը մատնէին մաշած հագուստները և տենդաղին խօսակցութիւնը : Պարտի հին խանի մը անկիւնը հաստատուած էր իր խմբագրատունը, — պղտիկ սենեակ մը, — տպարանի մը կից, և կը պատահէր մշտն իսկ որ խեղճ մարդը իր այցելուին սուրճ մը պարբերու հաճոյակաւարութեանը մէջ՝ սենեակահին բիրտ մեթումին կը հանգիայէր, և յուսահատ ակնարկ մը նետելով պատին վրայ ուր անվճար սուրճերու հաշիւը ցցուած կը մնար սպիտակ գիծերու երկար շարքով մը, տեղը կը նստէր գլխիկի տակ :

« Այն օրը ուր իմացայ թէ Հայկունին յաջողած էր իր թերթին վերստին հրատարակման գրամական միջոցները ապահովել ու գործի կը սկսէր փութացի այցելութեան երթալ իրեն՝ խնդակցութեան յայտնելու : Խմբագրատան սեմին վրայէն՝ առաջին ակնար-

կով՝ նշմարելի ընդհանուր բարեփոխում մը որուն վարժութեամբ չէին աչքերս: Հայկունին ձեռք մը նոր հաղթուած հաղած էր, եւ մաքուր գրասեղանի մը տակէն բնայա՛հ աշխարհը աւելաւոր լաւացած էր: Գետինը գորգ մը վառւած կար ու կէս երկրասանակ ակնակներ կը զարդարէին խուցը որուն սրահէն՝ աւելած, ուրբաւած էին... որձաւաճառին անգաղանաւոր նիւերը: Բայց այս նորութեանց մէջտեղ՝ նոր գէժք մըն ալ կար, սարէյ անձ մը, որ գրասեղանին անկիւնը նստած կը համբեր սպասուած թերթերը որոնք մասնաւոր տակէն ուղղակի իրեն կը բերուէին, մինչ Հայկունին՝ աջ ու ձախ հրամաններ արձակելով հանդերձ իր գրասեղանին տակէն, տեսակ մը սրտաւանդ ցոյց կու տար անկիւնը լաղմած անձին նկատեամբ:

«Այդ անձանցիկն ներկայութիւնը եւ Հայկունիի նիւթական վիճակին մէջ երեւան եկող, յանկարծական բարեփոխումը հետաքրքրութեամբ կը չարժէին այնքան բուռն կերպով՝ որքան անկողմ համակրող մըն էի երկրասանակ հրազարակողքին: Քանի մը օր ետքը միայն կրցայ իմանալ զանցանքը: Հայկունին... bailleur de fonds մը գտած էր յանձին այդ մարդուն, որ՝ արդէն իսկ բարեկեցիկ վիճակի մէջ՝ 5-600 սոկիի ժառանգութեան մը արժանաւորով, այդ գումարին շահագործման եղանակ մը կը խորհէր. Հայկունիին բարեկամները, — ճամբարիս բարեկամներ — խորհուրդ կու տան՝ լրագրական ձեւարկութեան մը յատկացնել զայն, եւ բարեմիտ մարդը կը հաւանէ: Այդ ժամանակէն գական գումարին շնորհիւ էր որ Հայկունին սկսաւ իր շարժաթերթին վերերեւմանը, լաւագոյն ու ազատով պայմաններու մէջ որոնք տեւեցին բաւական երկար ստան մը, մինչեւ որ գրաստանըրը տեսաւ թէ ուղարկական մասնաւոր կը սպասէր սոկիները՝ առանց ապագայի թերթերը սոկիի վերածելու...»:

Տ. Ա.

Տ Ե Ո Ր Է Ա Ն Ա Ղ Ա Ր Թ Ի Ն Ե

Մասիսի խմբագրութիւնը հաճելի պարտականութիւն մը կը համարի իրեն՝ հրապարակաւ խորին շնորհակալութիւն յայտնել իր

մեծայարդ պաշտօնակցին՝ Մանգումէի Էմիլեար ժողովրդական օրաթերթին, որ այնքան համակրալից սողերով ողջունած էր այս գրական շարժաթերթին շարքով տարեշրջանին սկզբնաւորութիւնը: Նոյնպէս կը փութանք հրապարակային շնորհակալութեամբ մը պատասխանել այն բոլոր գնահատական ու խրախուսական նամակներուն եւ բերանայի արտայայտութիւններուն որոնք եւ զան Մասիսի գրասէր բարեկամներուն կողմէ, թէ՛ Ամանորի եւ թէ՛ նոր տարեշրջանի առթիւ:

Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Տ. Սահակ Սրբազան հեռագիր մը ուղղելով ի Կայս. Պալատ, երախտագրութիւն մատուցած է իրեն շնորհում Ա. կարգի Մէճիսիէ պատուանշանին համար:

Կայս. զնահասում. — Իւլայի Բ. ատոման եւ Գ. կարգի Մէճիսիէ պատուանշան շնորհում է ստաճնակարգ վաճառական Յարութիւն Էֆ. Գարամանեանի եւ Իւլայի Բ. ատոման՝ Սեւանիկի արքանի կալուածոց տեսուչ Գրիգոր Էֆ. Բաշտեանի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՁԵՎՈՅՆԵՐ

Էնկիկիթի մեր բաժանորդներէն կը խնդրենք որ հաճին 1903 տարւոյ իրենց առկա հաշիւները կարգադրել՝ Մասիսի գործակալ Դանիէլ Էֆ. Ալըքեանի հետ, ինչպէս նաեւ ներկայ տարեշրջանի վերաբերեալ իրենց բաժանորդագրական յանձնարարութիւններն ընել յիշեալին որ ազնուարար կը շարունակէ թերթիս գործակալութիւնը 1903ին եւ:

ԽԱՐԵՐԴԻ մեր ընթերցողներուն կը ծանուցանենք թէ անձք որ կը փախազին նորոգել իրենց բաժանորդագրութիւնը ներկայ շրջանին համար, կրնան իրենց տարեկան բաժանորդագրելը, 50 դր., նամակի բաւով կամ մանուսքովով զրկել ուղղակի Մասիսի խմբագրութեան եւ թերթերը պիտի ստանան կանոնաւորապէս իրենց հասցէին, — վասն զի որչա՛մ ենք այս տարի գործակալ չունենալ Խարբերդի մէջ:

ԵՐԿՐԵ ԳՐԱՅ



Երկրի վրայ մեռնին յեղակներ ամեն,
Կարն են երգերն ալ բռնոց սիրաւես,
Կ'երազեմ ամբանց որոնք կը տեսն
Յաւես . . . :

Երկրի վրայ շքունքն հրալին մեղմօրէն
Բան մը չի բողով իրենց բաւեսն հետ,
Կ'երազեմ շքանց ոյց համբոյրք տեսն,
Յաւես . . . :

Երկրի վրայ կուլան մարդիկ համօրէն,
Մըտեմուքիւններն ու սերերն անհետ,
Կ'երազեմ զոյգեր ոյց արփանք տեսն,
Յաւես . . . :

ՓԱՐԳՄ. ԱՂԵՔՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Sully Prudhomme

ՈՍՏԱՆԻԿ ՏԷՐ ՄԱՐԳԱՐԵԱՆՅ

(ԶՈՐՐՈՐԴ ՅՕԴՈՒՍԱԾ)

Փոխարէն այն ինքնակենսագրութեան՝
զոր Ոստանիկ Տէր Մարգարեանց հրատարա-
կած է Բարիզի մէջ՝ և որուն բաղադրութիւն
օրինակները ցրուած է իր ուսուցիչներուն ու
բարեկամներուն, խոստացած է ի ներկայա-
ցնել ուրիշ ինքնակենսագրութիւն մը՝ զոր
Օռիան Իլլիսթրաէ հրատարակած է 1872ին,
և որ նախորդէն շատ բան պակաս չունի իր
զովեաւ և աստուածացում. ընդհակառակը:

Այդ յօդուածը՝ զոր կ'ամփոփեմ իր գըլ-
խանոր դիմերուն մէջ, հետեւեալ կերպով
կը սկսի.

«Ճրանաւորան ևւ անգլիական մամուլը
տարիէ մը ի վեր շատ կը զրաշի Պ. Ոստա-
նիկ Տէր Մարգարեանցով: Իր համբաւը՝
որուն արձագանքը պատուարեր կերպով մը
կը համար այն երկիրը՝ ուր ծնած է, դադա-
փարը կու տայ մեղի՝ մեր բաժանորդներուն
ներկայացնելու լուսանկարն ու կենսագրու-
թիւնը անոր՝ որ գիտական այնչափ բարձր
դիրք մը զբաւած է Արեւմտաւրի մէջ:

«Պ. Ոստանիկ Տէր Մարգարեանց ծնած է

Վանայ մէջ, ևւ զաւակն է ընտանիքի մը՝ որ
արդար համարում մը կը վայելէ: Պղտիկ
տարիքէն մամուսուր հակում մը ցոյց տուած
է ուսմունքի համար: Իր առաջին քայլէն
յայտնի եղած է թէ ինչ ըլլալու կոչուած է
ազադային. իր մայրելի լեզուին մէջ առա-
ջին սրբանակ ստացած է:

«Ընտանիքը՝ երջանիկ վկայ իր սրտառա-
դութեանց, զինքը կը զրիէ Կ. Պոլիս, ուր
կրկին ուշադրութիւն կը զբաւէ իր ուսա-
նողութեան նոր չըջանին մէջ. այլ ևւ այլ
յաշնողութիւններէ զատ՝ դարձեալ իր մայ-
րենի լեզուին առաջին մրցանակը կը չահի:
Կարճ ատենուան մէջ տեղական կրթական
հաստատութեանց շրջանը աւարտելէ վերջ,
1865ին կու գայ Բարիզ, իմացականութեան
այս անբաղդատելի ոտանը:

«Բարիզի մէջ, Ռօլէնի գօլէճին դասերուն
կը հետեւի, միշտ առաջիններէն հանդիտա-
նալով, մամուսուրաբար լատին ևւ ֆրանսա-
կան դպրութեանց մասին: Իր յաշնողու-
թիւնները ուշադրութիւնը կը զբաւեն ոչ-
բացեալ Ազաթօն Էֆէնտիի, առաջին քրիս-
տոնեայ նախարարը որ պաշտօնի կոչուած
ըլլայ Թուրքիայ մէջ, չնորհիւ մեր բարեխնամ
Վեհ. Սուլթանին:

«Ազաթօն Էֆէնտի՝ որ իր վաղահաս
մահուամբ չըլլցաւ առաջ տանիլ այն արգիւ-
նարեր գործը որուն կոչուած էր, փափա-
քելով օսմանեան հոգադրութիւնը օժտել
այն տեսակ տարբերով որոնցմով կարելի
պիտի ըլլար յաշնոյցնել անոր յառաջդիւ-
թիւնը, յորդարեց իր երիտասարդ ու մտացի
հայրենակիցը որ Կրիստոնի համբաւաւոր վար-
ժարանը մանէ: Ազաթօն Էֆէնտի՝ ինքն իսկ
այդ վարժարանին դասերուն հետեւած և իր
հիմութեան լաւագոյն մասը անկէ ստացած
ըլլալով, ուրիշ ամէն մարդէ աւելի կրնար
անոր առաւելութիւնները գնահատել:

«Եւ սակայն, Ազաթօն Էֆէնտիի ուսա-
նողութեան միջոցին՝ Կրիստոն տակաւին չէր
ստացած այն կատարելութիւնները՝ որոնք
այսօր իր փառքը կը կազմեն: Աւանդուած
դասերը անկէ ի վեր չա'տ լուրջ ու էական
հանգամանք մը ստացած են: Այն ատեն
վարժարանը չէր կրնար հարստագեհնողա-

գործի տխուր տալ : Ծնորհիւ այն կա-
տարելութեանց՝ որոնք մայրուած են իր ծրա-
դրին մէջ , Կրինեօն՝ այսօր յառաջդիմական
մեծ հաստատութիւն մը դարձած է , և բո-
վանդակ Եւրոպայի մէջ անուրանալի նշա-
նակութիւն մը ստացած :

«Կարժարանին ծրագիրը սակայն՝ որ վե-
րաքննուած է , և որուն նոր դասեր աւել-
ցուած են , ընտելեցուցած մեր աշ-
խատանքը հայրենասիրիցը (*), որ կոչուած էր
պատկերու այն յոյսերը՝ զորս Ազաթիօն
էֆէնտի, — պաշտպան մը ու բարեկամ մը
միանգամայն, — դրած էր իր վրայ :

«Ի՛նչ տուն վերջ , Պ . Ռոստանիկ Տէք
Մարգարեանց կ'ընդունուէր Կրինեօնի վար-
ժարանը , քննութեան ներկայացող աշա-
կերաներուն մէջ վեցերորդ հանդիսանալով :
Բայց օտարականի մը համար արդէն իսկ ան-
յոռալի այդ յաջողութիւնը չէ բաւած իրեն .
ստիկա հանգրուան մըն էր միայն՝ ուրիշ ա-
ւելի վերերը պիտի բարձրանար :» —

Օռիան Իլիւսքոէ այն սողերէն վերջ կը
յիշատակէ այն մասնակի յաջողութիւնները՝
զորս Ռոստանիկ Տէք Մարգարեանց ձեռք
բերած է Կրինեօնի մէջ , երեք տարուան ու-
սանողութեան միջոցին , յաջողութիւններ՝
որոնց համար, — ինչպէս սովորութիւն է , —
կ'ընդունէր նախարարական շնորհատու-
թիւններ , պատուոյ յիշատակութիւններ , և
որոնք պիտի պատկուէին վերջնական յաջ-
թանակով մը՝ չըջնաող արտի քննութեանց
սովիւ :

«Հանդիսաւոր մեծ քննութիւնը կը սկսի ,
— կը յարէ Բարիդեան հանդէսը : — Ամ-
բաջլ երեսուն օր , տասերկու տարբեր
երդուեալ քննիչ մարմիններ՝ որոնք զխառ-
կան հեղինակութիւններէ բաղկացած են ,
պէտք է քննեն թեկնածուները :

«Մըյակիցներէն իւրաքանչիւրը (ընդամենը
երկու հարիւր հազիւ էին) իր բովանդակ կա-
րգութիւնը կը սպառէ : Պէտք է կորզել
սակի միջոցը , «Պատկաւոր»ի տխուրը ,
մէկ խօսքով՝ առաջին մըյանակը :

(*) Պէտք է գիտնալ թէ Օռիան Իլիւսքոէ
հրատարակիչը Օռի . հպատակ մըն էր :

«Վերջապէս՝ Արեւելք կը յաղթանակէ :
Պ . Ռոստանիկ Տէք Մարգարեանց , քննու-
թեանց արդիւնքին յայտնութեան միջոցին
առաջին կը հռչակուի նոյն ինքն նախարարին
կողմէ , ընդհանուրին ծախահարութեանց մէջ :

«Այս յաջողութիւնը զարմացման տեղի
տուաւ անո՛ր համար մանաւանդ որ մինչև
այն ատեն՝ ո՛չ մէկ օտարական այդ ստորիճան
կարեւոր վարժարանէ մը կրցած էր ստանալ
մըյանակ մը որ սպաւազ կը վճռէ :» —

Օռիան Իլիւսքոէի յօդուածը հոս կանդ-
չաւնէր . յաջորդող սողերուն մէջ յիշատակ-
ուած են այն յաջողութիւնները՝ զորս Ռո-
ստանիկ ձեռք բերած է Կրինեօնէն չըջնաող
ւարտ ելլելէն վերջ , ու մասնաւորաբար այն
ուշադրաւ ուսումնասիրութիւնը զոր հրատա-
րակած է Ժուռնալ sk Տեպայի մէջ : Այդ
յիշատակութիւններէն վերջն է որ կ'անցնի
Տէք Մարգարեանցի Հոգադորձական Ակա-
դէմիայի անդամակցութեան . —

«Գիտական աշխարհը , — կը գրէ , — իրեն
թարգման ունենալով Ֆրանսայի Հոգադոր-
ձական Կեդրոնական Ընկերութիւնը , որ հո-
գադորձական ու անտեսական գիտութեանց
Ակադէմիան է , բնականաբար իր ուշադրու-
թեան առարկայ պիտի դարձնէր այդ դրողը՝ որ
այնչա՛փ խոյ հմտութիւն մը ցոյց կու տար իր
երկրին անտեսական կացութեան նկատմամբ :

«Այս գիտական մարմինը , որ յիսուն եր-
կու անդամներ ունի , գիտութեան ամենէն
բարձր ներկայացուցիչներէն կազմուած է : Ի
մէջ այլոց , կը բաւէ յիշատակել Պ . Պ . Պու-
սինեօն , Շրվուէօլը , նշանաւոր քիմիագէտ
Տիւման՝ նախկին նախարար և ծերակուտա-
կան , ինչպէս նաև Պ . Տրաֆին ալ Լուիսը՝
նախկին կայսերական զազանի խորհրդական ,
և Խրիսթի պատերազմին տակնն ալ արտաքին
գործոց նախարար , հեռաւոր պետական անձ-
նաւորութիւն մը՝ որուն եթէ անուային՝ Ֆը-
րանսա կրնար փրկուիլ (Ֆրանքօ-գերման
պատերազմէն) : Յիշենք տակաւին Վօկիւէի
մարքիզը՝ հայր Կ . Պոլոյ ֆրանսական դեռ-
պանին , Գէուկօլէյի կոմսը , Պ . Պ . Բաթթէօսը ,
Էլի ալ Պօմօնը , ինչպէս նաև երկու մեծ
հաղագէտներ՝ Պ . Պ . Պէլլա և Լըքուօ ,
Էւային , Էւային :

«Այս ընկերութիւնը որուն Ֆրանսացի անդամներուն թիւը 52ը չի կրնար անցնիլ, կրնայ իւր անդամ ընդունիլ նաեւ քսան օտարականներ՝ պայմանաւ որ գիտութեանց մէջ հաշակ հանած անձնաւորութիւններ ըլլան :

«Գերման նշանաւոր գիտուն Լիպիկի պաւստը, մասնաւորաբար կը ներկայացնէր տարաշխարհիկ (exotique) գիտութիւնը : մահը սակայն՝ Ակադեմին զրկեց անոր աշխատակցութենէն :

«Այդ թափուր մնացած ակնարկ առիթ կը դառնայ որ Պ. Ռոտանիկ Տէր Մարգարեանց փառափրական շատ յանդուգն ձգտում մը մտայնէ : Բայց իրական արժանիք ունեցող աշխատութիւն մը պէտք է այդ գիրքին ու տխուրահին համեմու համար : առանց ասոր՝ անկարելի է, մանաւանդ օտարականի մը համար, գրաւել այդ թափուր ակնարկ : Մեր հայրենակիցը այս պարագան հասկնալով, Փոքր Ասիոյ բնական պատմութեան վերաբերեալ գիտական ուսումնասիրութիւն մը կը ներկայացնէ Ակադեմիին : Գրութեան արժէքն ու պարունակութիւնը անուշադիր չեն անցնիր : Ակադեմին կ'ընդունի այդ աշխատութիւնը, ու միաձայնութեամբ կ'որոշէ զայն հրատարակել իր մասնաւոր հանդէսին մէջ :

«Այս տեսակ հովանաւորութիւններով, և Պ. ար Լուիսի պէս անձեռու յանձնարարութեամբ է որ Կրիստօնի նախկին պատկաւորը Հոլագործական ընկերութեան ղեկավարին կը ներկայացուի, և երկուր ձեռակերպութիւններէ ու սովորական քննութեանց ենթարկուելէ վերջ, պատիւը կ'ունենայ բոլոր քառնները իր անուան շուրջը կեդրոնացնելու :

«Տասնութիւն տարիէ ի վեր ո՛չ մէկ օտարական կրցած էր ընտրուիլ, ո՛չ մէկ Արեւելոյցի կրցած էր այդ ստորձան նշանակելի պատիւի մը արժանանալ : Միւս կողմէ, Բնակչութեան դուռները երբեք այս ստորձան երկտարաբար անդամի մը ընդունելութեան համար չէին բացուած . զայն կողմաներէն ահիւսն պզտիկ յիշուած տարեկան է : Այդ պատճառաւ է որ հանդիսաւոր նիւտին մէջ՝ որուն կը նախագահէր նոյն լինքն երկրագործական և առեւտրական նախարարը, բոլոր ակնարկները՝ պատուարեւ համակրութեամբ

մը կեդրոնացած էին Պ. Ռոտանիկ Տէր Մարգարեանցի վրայ, որ առաջին անգամ ըլլալով կը բազմէր իր նշանաւոր անդամակիցներու շարքին մէջ :

«Երբ Ակադեմիին մշտնջենական քարտաւարը այս անուանուեց ծանոյց, ներկաները երկարատեւ ծախհարութիւններով ողջունեցին զայն :

«Նկատելով որ Պ. Ռոտանիկ Տէր Մարգարեանց տախտին քանորութիւնը տարեկան է, կը մտածէինք թէ այս կենսագրականը իր լաւագոյն վերջարանը դառնալով պիտի ըլլայ Բուսնէյի հեռուեալ տողերով .

«..... Chez les âmes bien nées,
La valeur n'attend pas le nombre
des années» :

* * *

Որչափ որ ալ չափազանցուած տողեր ըլլան այս լինքնակենսագրութեան մէջ, կրկին կայ բան մը որ չի կրնար ուրացուիլ, այսինքն Ռոտանիկ Տէր Մարգարեանցի արժանիքը : Կրիստօնի մուտքի քննութեանց մէջ վեցերորդ, յետոյ, միեւնոյն վարժարանին աւարտական քննութեանց մէջ առաջին, և ապիւհ երկու հարկուէ աւելի ու մեծ մասամբ ձեռնադրուող աշակերտներու մէջ, ասոնք առաւել չեն : Պաշտպանութեան, կողմնակցութեան խնդիր չկայ . Վանքի երկտարաբար վարժարանին մէջ երբեք պարտադ չէ անցուցած իր ժամանակը, և եթէ գիտունի, արեւտեալէտի հարցաւ մը հանած է վարժարանէն դուրս, խորտակիլ, անհիմն հաբաւ մը չէ եղած ասիկա : Իր գրչին արդիւնքները մշակելուն և, արդիւնքներ՝ որոնք գիտական չափաւոր Սկադե Բիէ մը գնահատուած ըլլալով, ո՛ր և է տալիս յոյս տալ չեն կրնար ինչպէս ընտ : Բանըտութիւն տարեկան հասակին մէջ Ֆրանսայի գիտական ամենաբարձր մարմիններէն մէկուն մէջ պատուարեւ գիրք մը գրուել՝ փառք մըն է պոռն իր մէջ առաջ ո՛չ մէկ Հայ երկտարաբար կրցած է հասնիլ : Անիկ ի վեր՝ Մանուէրեանի օրինակը կայ միայն, հոգ չէ թէ տարեւոր համեմատութիւններով :

Տէր Մարգարեանցի յաջողութեանց պատճառութիւնը հոգ չի կտաիր : Անդամ նշանակուած է առիւստն Ֆրանսայի Հոլագործներու

Ընկերութեան՝ որուն նախագահն էր Պ. Տրուինսը Լուիս, և քիչ մնացած է որ Պատուոյ Լէգէոնի պատուանշանին արժանանայ՝ չնորհիւ Պիեմ Բիւլլիքի անօրէն, և Յրանապի Հանրապետութեան նախագահ Պ. Թիէռի լարեկամ Հանրի Վրինեոյի միջնորդութեան:

Այդ ընթացքով, ընակահանքար պիտի կրնար չա՛տ նախանձեղի դիրքի մը տիրանալ: Բայց մինչեւ հոգ հասնելու համար արդէն իսկ բաղմամբ խարդախութիւններ ըրած էր: Հարուստ, փարթամ ու չալլ պէտք է երեւար իր շահագործած մարդոց աչքին: Պէտք էր որ չա՛տ ճոխ բնակարանի մը մէջ ընդունէր զանոնք: Պէտք էր ընծաներ տալ, կաշառք տալ, ինչպէս 3,000 Ֆրանք տուած է Պիեմ Բիւլլիքի անօրէնին (*): Այս ամէնուն տոկալու համար խարդախութիւններէն տարբեր միջոց մը չունէր, և արդէն իսկ առնուած առաջին քայլէ մը վերջ ա՛լ չէր ուզած կասիլ, մանաւանդ որ իր յարաբերութեանց չնորհիւ ահագին վատահոլութիւն մը չա՛ած էր, ինչ որ անհունապէս կը նպաստէր իր ծրագիրներուն յաջողութեան: Այդպէսով է որ մէկ երկու տարուան շատ կարճ ընթացքի մը միջոցին յաջողած էր 850,000 Ֆրանքի չափ դրամ չորթել, արդիւնք մը՝ զոր Տիկին Թէրէզ Հիւմպէռ իսկ սրտանց պիտի ծափահարէր (**):

Տեսնենք հիմայ թէ ի՞նչ եղած է այս արտակարգ մարդուն խարդախի կեանքը, և թէ ի՞նչ միջոցներով, ի՞նչ օժանդակութիւններով կրցած է չորթել այդ 850,000 Ֆրանքի ահագին գումարը:

Յաջորդով ուրեմն:

ՄԷԲԱՆՏԷՍ

(*) Այս պարագան երեւան ելած է Ոստանիկի դատաւարութեան միջոցին: Նոյն իսկ Պ. Վրինեո հարցաքննութեան մը ենթարկուած է այդ պատճառաւ:

(**) Այդ 850,000 Ֆրանքի գումարէն 345,000 Ֆրանքը վրայ տուած է Ոստանիկի դիւտար պահանջատէրը՝ ակնավաճառ Պ. Պրենսովիք՝ որուն բողոքին վրայ արդէն Տէր Մարգարեանց ձերբակալուած է:

ԱՏԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՍ

ՀԹԻՓՍԻՄԷԻՑ

Սէրերս գրած էի, ատելութիւններս չըսելու համար պարզապէս. բայց վերջէն, երբ յօդուածս լմնցուցի, տեսայ որ սխալած եմ, ինչպէս քոյրս ալ արդէն ինծի միջեցուց տոնկա. ո՛չ սէր, ո՛չ ատելութիւն ուրեմն, քանի որ հիմակահիմայ, զՁեզ ո՛չ կը սիրեմ, և ո՛չ ալ կ'ատեմ: Խոստովանութիւն մը չէ որ կ'ընեմ ես ասիկա գրելով. անանկ ըմբռնած եմ որ մարդ ինչ որ կը խորհի՝ ըսելու, գրելու է անկեղծօրէն:

Երկուքս ալ մէկ սեռի կը պատկանինք, սա տարբերութեամբ որ դուք կիճ էք, և ես աղջիկ:

Տարբերութիւնը այնքան մեծ չէ, ինչպէս որ կը տեսնէք: Դուք ինէ աւելի փորձառու էք, դուք ինէ աւելի առաջ սկսած էք գրականութիւն ընելու: Ա՛ս է, կարծեմ, մեզ իրարմէ բաժնող պատուարը:

Դուք ալ ինծի պէս անկեղծութիւնը կը սիրէք եղեր, գոնէ այսպէ՛ս կը հասկնամ Ձեր վերջին գրութիւնէն: Աւելի՛ աղէկ. գէթ քիչ պիտի յոգնինք իրարու բան մը հասկըցնելու համար: Սակայն աճապարեմ ըսելու որ, Ձեր կարծածին չափ, աղնիւ Տիկին, այնքան անկեղծութիւնը սիրողներէն չէք:

Բայց, ինչո՞ւրեմ, չի բարկանաք ասանկ ըսելուս համար: Եթէ սխալներ գործեմ, ա՛ղա՛տ էք երեսի՛ս զարնելու այն թերթին մէջ ուր կը գրէք:

Շիտակը ըսէք, սիրելի Տիկին, սա նախադատութեան մէջ անկեղծութիւն կա՞յ. «Սիրելի է ինձ տեսնել կնոջ մոտաւորական յառաջդիմութեան շարժումը. անոր համար՝ հակառակ բոլոր իզական մեքենայութեանց, որոնց առարկայ եղայ յորմէհետէ երեւցայ լրագրութեան մէջ» (բոլորովին մոթ կէտ մըն է ինծի համար այս խօսքը, եթէ գրական եմ այդ մեքենայութիւնները, պէտք էր որ մե՛նք ալ գիտնայինք, իսկ եթէ անձնական կամ անհատական, ատոր ըսելիք չունիմ . . .), հակառակ նախանձոտութեանց, պիտի չնոր-

հաւորէի Օրիորդ Մառի Յովհաննէսեանի մը
երեւումը, եթէ իր երկրորդ գրութեամբն իսկ
որ երեւցաւ ցորեկուան թարչամած օրաթեր-
թի մը էջերուն մէջ, քննադատած չըլլար
մեզ, տախիկ կանանց բաժինը գրողներս»:

Հո՛ւ է որ, սիրելի տիկին, Ձեր ջառա-
գոված և սիրած անկեղծութիւնն ու անա-
չառութիւնը, տեսակ մը անգիտակից, ան-
գիմադրելի ջանքի կը փոխուի, մեզ՝ ան-
կեղծներս վիրաւորելու համար: Զիս անոր
համար չէք շնորհաւորեր որ, զՁեզ քննա-
դատած եմ, անանկ չէ՞: Սքանչելի գիւտ:
Ըսել է, եթէ զՁեզ փառափառեի, պիտի
չուշանայիք, յօդուածիս երեւումին երկրորդ
օրն իսկ, Ձեր այցեւորմանը զրկելու, հետեւեալ
գրութեամբ:

«Սիրելի գրագիրտուհի,

«Սքանչելի, հիանալի էր Ձեր յօդուածը,
զոր ինծի ուղղելու բարութիւնը ունեցած
էիք: Ձեմ կրնար փոխարինել ևն. ևն...»

Ձեմ սխալիւր ենթադրութեանս մէջ. անց-
եալ օր ցոյց տուիք արդէն Ձեր այդ թե-
րութեան արդիւնքը:

Հաւատացէ՛ք որ կեանքիս մէջ, ո՛չ ոք
տեսած էի որ ասանկ փափուկ պարագայի
մը, իր սրտին ու գրչին մաղձը, ինչպէս
կ'ըմեն շաւեր, թափէր՝ ցոյց տար հակառա-
կորդի մը:

Անցեալ չաթութեան Մասիսներէն մէկուն
մէջ, Տ. Ա. զիս քաջալերած էր գրելու շա-
րունակելու համար: Խոստովանիմ որ առ-
նալով հանդերձ չփախայ, տեսակ մը սիրուն
փափաքի գոհացումը տեսնելով անոր մէջ:
Անցայ, և այն ամէն գովեստները զորս
ինձի կը շուայէր, պիտի վիրաւորէին զիս,
եթէ սակաւն պարկեշտ ու անկեղծ սրտէ մը
բզկած չըլլային: Շփացայ, նշմարելով էրիկ
մարդէ մը հասած այն քաջալերութիւնը, զոր
նոյն իսկ իմ սեռակիցներս ինծի մերժեցին:
Բայց և, առաջնորդ ունիլ պէտք չունիմ, ինչ-
պէ՛ս այդէն ըսաւ Մասիսի խնայողարարը:
Իմ գաղափարներէս ու զգացումներէս թե-
լադրուած, պիտի գրեմ միշտ, առանց նպո-
տակաւոր չարածնութիւններու:

Շաւեր ինծի համար ըսին որ ազէկ կը

գրեմ, թէ սիրուն գրիչ մը ունիմ, թէ երկու
յօդուածով օրուան մարդը դարձայ: Պահ մը
կը տարախուսիմ թէ այս բոլոր պատիւները,
որոնց կ'արժանանամ հրապարակաւ, իրաւ-
ցնէ գրելու կարողութեամբս կը արուին, թէ՛
իգական անհատականութեանս կը դարմանամ
կոր, երկու յօդուածով օրուան գրչի կինը
դարձուցին զիս, և անպատելի անակնկալ մը
պիտի չըլլայ ինծի համար, եթէ երբեք վաղը
միւս օր մէկը ելլէ զիս Եւրոպական գրակա-
նութեան ներկայացնելու:

Ձեմ սիրելի շտեմութիւն և աւելորդ փա-
ռաքանանքը:

Ուրիշներ իմ գովեստս կը կարդան, ան-
կեղծօրէն կամ ոչ: Դո՛ւք էք, աղնիւ Տիկին,
այն տարօրինակ տիպարը, որ ներքնապէս հաւ-
նելով հանդերձ չուզեր շնորհաւորել մէկը,
որուն հետ գաղափարի անհամաձայնութեան
մը մէջ կը գտնուի տարիներէ ի վեր:

Ասոր՝ կ'ըսէք դուք անկեղծութիւնը:

Բայց չէ՛, ալ հիմայ չեմ ուզեր լսել Ձեր
ծափերը, կնոջական գրականութեան մէջ նոր
մանող ազդկան մը առթիւ: Ձէ՛, ասկից
ետքը ալ Ձեզի՛ ըլլան ատոնք և կամ ձեր
միւս գրագէտ քոյրերուն պահեցէք. ևս ար-
դէն չէի սիրեր ծափի աղմկոտ կատակեր-
գութիւնը:

Ձեր քննադատականին հանդէպ Սիպիլի
ցոյց տուած լռութիւնը, կատարեալ արհա-
մարձանք մըն էր, աղնիւ Տիկին և ասիկա,—
կը դարմանամ,—Մասիսի «Գրական աշխարհ»
յօդուածէն վերջն է որ հասկցաք դուք: Եւ
կ'ըսէք. «Իրէն բոլորովին իրաւունք չտալով
հանդերձ, կը սկսիմ կաշկածիլ. ո՛վ գիտէ,
կրնայ ըլլալ, քանի որ բանաստեղծի լուսա-
պտակը չեմ կրեր... երբեք չեմ սիրած երալի
կեանքը, ճանչցած եմ զայն դեմ յանդիման-
օրէն»: Ու քիչ մը վարը, հակառակ բանաս-
տեղծութիւնը ատենուդ, սոխակն ու թի-
թեռնիկը իրար կը խառնէք, անտրամաբա-
նալիան նմանութիւն մը չիսելու համար:

Եւ կը գրէք դարձեալ, «Լոկ գրական
նպատակի մը համար երեւցայ և ուղեցի
ճանչցուիլ. առանց հաշուելու թէ նոյն իսկ
այդ պատճառաւ գրական ամէնէն ասուր մե-
քննադատականաց ասորիայ պիտի ըլլայի»:

Ձկրնալով հանդերձ բան մը հասկնալ, սա գրական մեքենայութիւն ըսուած բացատրութեան, կը հարցնեմ Ձեզի թէ ի՞նչ տեսակ գրական ըմբռնում է առ որ ունիք, մի՞միայն ճանչցուելու նպատակով գրականութիւն ընելու համար: Ի՞նչ տխուր խոստովանութիւն:

Բոլոր մեր գրչի կիներն ալ ատանկ են արդէն. մէկը քմահաճոյքի համար, ուրիշ մը ճանչցուելու, երրորդ մը իր գրացուհիներուն պատմութիւն ընելու նպատակով կ'աշխատին. ոչ ոք գրականութիւն ընելու համար կը գրէ:

Եւրոպայի գրչի կիները որքան ալ տարբեր նկատումներով գրեն, որքան ալ տարբեր գաղափարներու առաջնորդուին, նորէն սիրելի են ամէնուն. պատճառը այն է որ անկեղծութեամբ կը գրեն: Նոյն իսկ անցեալ օր Սառա Պէնսար չէր վարաներ իր երիտաւոր գրական յիշատակներէն մէկը Ֆրանսալիներուն վիպելու, այնքան անկեղծօրէն՝ որքան կարելի է երեւակայել:

Անկեղծօրէն գրեցէք, անկեղծաբար՝ յայտնեցէք ձեր կարծիքները, ձեր ըմբռնումները, օրուան գրական և ընկերային խնդիրներու մասին, և ապահով եղի՛ք, ո՛չ ոք ձեր քանայքին վրայ պիտի կոխէ այն ատեն:

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՄԱՍԻՍի հասցեն է, այսուհետեւ, Ղալաթիա, Քամանօ փողոց, քիւ 8, Օսմ. Նամահասան Եսին:

Հետեւաբար, քերթին հետ որ եւ է գործ ունեցողները կը հրաւիրուին դիմել տոյն հասցեին, — «Արեւիկ»ի սեպհական նոր շէնքը, ուր փոխադրուած են այդ օրաքերթի Տպարանն ու Խմբագրութիւնը եւ ուր հաստատեցան նաեւ, Նոր Տարին սկսեալ, «Մասիս»ի Խմբագրութիւնն ու Տնօրէնութիւնը, անջատօրէն:

Թղթաբերով ղրկուելիք լոգուածներու ինչպէս նաեւ բաժանորդագրներու առաջման համար կը բաւէ գրել սա միակ հասցեն.

Խմբագրութիւն «Մասիս» Շաբաթաքերթի Ղալաթիա, Կ. Պոլիս

ԷՁ ՄԸ ՕՐԱԳՐԷՍ

ՆՈՐ ՏԱՐԻ

Կաղանդի գիշերը՝ մինակ եմ, մի՛ս մինակ ... Ինքզինքիս հետ:

Իրիկուան դէմ երկու բարեկամներ եկած էին, մութնալուն պէս մեկնեցան անոնք, ճաշեցինք, յետոյ եկանք եղբորս հետ դէմ առ դէմ նստանք սա սեղանին շուրջը: Նամակ մը գրեցի.

Սա 1902ը վերջինը ըլլալով անգամ մըն ալ գրեմ, ըսի սկսած ատենս:

Նամակը փակելէս ետքը դիտեցի որ եղբայրս կը ճանձրամայ:

Իրաւ, խեղճ պղտիկը, իր տարիքին իրաւունքովը, խօսելու, խնդալու, զուարճանալու պէտք ունի ասանկ օր մը մանաւանդ. բայց ես ինչպէ՞ս զուարճանեմ զինքը, երբ ինքս զուարթ չեմ: Գիրք մը բացաւ ու սկսաւ երբեմն վրան նայիլ, բայց վերջապէս այդպէս անխօսուկ նստելով քունը եկաւ, արմուկները սեղանին կռթնած, ատիւրուն վրա յենած գլուխը կքեցաւ և արտեւանունքները կամաց կամաց գոցուեցան. քիչ մը ատեն զինքը դիտեցի, յետոյ՝

— Ելի՛ր սղաս տեղդ պառկէ, անհանգիստ կ'ըլլաս այդպէս, ըսի:

Չայնիս հնչումէն աչքերը բացաւ յանկարծ, պղտիկ ցնցումով մը, չորս դին հաւցեցաւ, ինծի նայեցաւ, յետոյ համակերպող շարժումով մը դիրքը գոցեց ու սննկակը քաշուեցաւ:

Մինակ եմ հիմայ, միս մինակ ... Ինքզինքիս հետ:

Ի՞նչ հակադատելի անցեալ տարուան Կաղանդի գիշերուան հետ: Այն ատեն Պոլիս էի, իրիկուան, վաճառատունէն ելլելէն ետքը, ժամերով պտտեցայ Բերայի ժիւղալից եռուղեւումին մէջ, ամբոխին խռնուած, Պաշար Ալմանի, Պօն Մաշէի, Բիկմալիօնի ու դեռ ուրիշ մեծ վաճառատուններու ճոխ ու ալազան ցուցադրերուն առջև, մեծ

քաղաքներու տեղի ու հայրենի կեանքին յատուկ տեսակ մը առաջնություն մէջ, մասցիր, կէս մը ինքզինքն մոռցած :

Իսկ հիմայ՝ գիւղն եւ՛, երկայն անկ վաղոցն մը խորը, պարտէզով շրջապատուած մեր սղարիկ տունին — տեսակ մը մենաստան փոքրիկ սրահին մէջ, մինակ, միւս մինակ, խոհուն ու մտածիրով : Աւելի աղէկ ասիայն այս գիւղի կեանքը, այս անդորրութիւնը, այս լուսնիկներ, ինծի համար, ի՞մ բնաւորութեան համար, որ ժխտէն, ազմուկէն, եւ առաւելու մէջ խորշող մը եղած եմ սկիզբէն ի վեր : Աւելի աղէկ ասիկա՝ սրտիս երազներուն անէպոստէն վրայ կարօտագին անհարկներ ուղղելու՝ փախուող ու բացուող տարիներուն միութեան գիծը եղող այս գիւղերուան ժամերուն :

* * *

Երէկ ինչ աղւոր լուսին կնք դուրսը : Կէս գիշերին մօտ բարեկամի մը առնէն կու գայի : Զրահով ծածկուած բլրակին վրայ ինչ քնքուշ ու ազատ բեկրեկում մը ունէին արծաթ ցոլքերը : Մարդ մարդասանք չկոր վաղոցները, ճամբաս գիտեմք երկարեցի քիչ մը : Այս օր ալ այնպէս սլափ բլար, բայց առատւնէն ի վեր դորձ դորձ աւելի հարիւրնին վրայ սկսան գիւղակի ու հիմայ իստականած են քնքուշ լուսնակը, իր գէտքը վաղցած են մեզի :

Շիտակը ասիկա շատ անձունի կազմեղէք՝ երկնքին կողմէն այս գիշեր : Կեանքը այսպէս է ասիայն, օրինակի համար ահա լուսինը կը հնայէ քեզի, կ'արըշտէ, կը սրբու գայն, կուզես միշտ գիտել, անյադ, անձանձրայթ եւ ահա ամպեր կու գան կը ծածկեն, կը սրահեն, կը դառնան գայն քեզի : Ու ա՛լ սլափ սարսեւս որ փարսալին անունք :

* * *

Բաթրֆայտը վառարանին դռնակը կը բանամ ու գիտացը, գորգին վրայ կ'ընկողմանիմ վայտերուն այրիլը գիտելու համար քիչ մըն ալ :

Մէջտեղը կաս կարմիր է դեռ կրակին, կանանչորակ սղարիկ բոցեր առնի, մինչ քովերը սկսած են մոխրի նուրբ խաւ մը բռնել կամայ կամայ : Սրտի կեանքին որչա՛փ կը

նմանի ասիկա : Սիրտն ալ չէ՞ մի որ, իր ժիթիւմին մէջ կեռայ, կը վառի, կը բորբոքի, բոցեր կարծակէ, կը վժվժայ, ու ասիկա՛ այդ եռացումը, այդ այրումն իսկ կը սպառէ գինքը կամայ կամայ, կրակը մոխրի խաւ մը կը կապէ որ հեղհեղէ կը թանձրանայ, աստիճանաբար բոցորովին կը ծածկէ, աներեւոյթ կ'ընէ գինքը, ու վերջապէս կը փճացնէ կը թաղէ իր դորձ փոշին մէջ : Ի՞նչ կը մնայ կրակէն . — ափ մը մոխիր : Ի՞նչ կը մնայ սրտէն . — ափ մը հող : Հէ՞ . . . Ո՛ր, շատ տխուր նմանութիւն մըն է ասիկա :

* * *

Բացարձակ լուսնիկներ պատէն կախուած ժամացոյցին թիքթիքաքը միայն կը խղէ : Աս միօրինակ թիքթիքաքն էր որ հասցուց գացող տարին՝ 1902ը, ու ասիկա է որ յաջորդը սլափ բերէ քիչ մը ետքը : Քիչ մը ետքը, կէս գիշեր գարեկած ատեն, ո՛վ կ'ընէ թէ առոր նուրբ հնչումը ահագին տարի մը սլափ գլորէ անդունդին մէջ եւ ուրիշ ահագին տարի մըն ալ սլափ քաշէ բերէ, այդ բարակ, քովի սեւեակէն հաղիւ թէ լսուող ձայնը : Այնպէս է սակայն ,

Կը սպասեմ՝ 1903ին : Ամբողջ սրահը ստուերի մէջ կը մրախէ, միայն դրասեղանն է որ լուսափայլին թափած առատ լոյսովը ողողուած է : Կը սպասեմ : Ի՞նչ սլափ բերէ ինծի եկող տարին : Թերեւս ամէն բան, ի՞նչ որ կրնամ բաղձալ ու թերեւս ալ ոչ ի՞նչ . — Ինձ «սչի՛նչ»ը — ո՛վ գիտէ : Ու չգիտնալու համար ահա կը սպասեմ անոր :

Թի՛ն, թի՛ն . . . : Կէս գիշեր է : Ու միտակը, միտ միտակը նայուածքս գէշ ի ժամցայր կ'երթայ՝ անոր մէջէն տեսնելու համար կարծես նոր տարին : Ինչո՞ւ նոր սակայն, ո՛ւր է տարբերութիւնը հինին եւ նորին : Ժամացոյցը իր միօրինակ թիքթիքաքը կը չարուհալէ միշտ, մութը սրտուհաններէն ներս կը խառնէ, լուսնիկներ կը տրիւն, ու ամէն բան ճիշդ այնպէս է դարձեալ, ինչպէս որ էր կէս գիշեր գարնելէն առաջ :

Իրա՛ւ որ անխմտութեան, սպո՛ւշ բան սա «Նոր Տարի» բառն ալ :

ՓԱՅԼԱԿ

ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Այգեգործութիւն. — Էլպա կղզիէն Ֆուխն անուն Գեր բանայի մը նոր ծրագիր մը պատ-
րաստած է, որով այգեգործութիւնը աւելի
պիտի բարգաւաճի եւ ընդհանուր յառաջդի-
մութիւն մը ունենայ: Ֆուխսի ծրագիրն է՝
խրաքանդելու երկաթուղէն արտադրող գետնի
վրայ հինգ ձուկեր կանգնել, ամէն մէկը իր
գողգոթին վրայ ունենալով՝ միմեկորակն
եղեկարահանութիւն հայթայթող մարտիոց-
ներ: Յետոյ՝ թեկերու միջոցաւ եղեկարահա-
նութիւնը վար իջնցնել, եւ գետնին ներքեւ
թաղելով՝ եղեկարահանայած ցանց մը կազ-
մակերպել: Այսպէս, հալը բնականօրէն աւելի
սաք է եւ կենդանականութիւն կը պարունակէ
որքան որքանիքուն աճումը բաղմապատկելով,
այնպէս որ, փոխանակ աւարին անդամ մը
այգեկութ ունենալու, քանի մը անգամ ձեռք
կրնայ բերալ, միեւնոյն ժամանակ որքա-
նաւորութիւնը միշտ, եւ կամ համապատասխան
բնոյ առոյգութեանը մէջ պիտի պահուին: Պ.
Ֆուխս եթէ իր այս ծրագիրը գործնա-
կանի վերածէ՝ այգեգործութիւնը աներեւա-
կայելի յեղաշրջում մը պիտի կրէ: Պ. Ֆուխս
գինիի մեծ գործարաններ ունի, եւ կը խորհի
իր ծրագրով գինիի բոլոր արտադրիչներուն
վրայ գերազան հանդիսանալ, մինչեւ որ
միւսներն ալ իր գրութեանը հետեւին:

Ծովի ջուրը . . . բնագի. — Ամե-
րիկեան օրաթերթ մը յօդուած մը հրա-
տարեալ է, մամադէտ բժիշկի մը տա-
րագրութեամբ, յայտարարող թէ «Ծովու
ջուրը եթէ խեղճ՝ առողջութեան մեծապէս
կը նպաստէ»: Յօդուածագիրը առաջին կը
պարզէ իր տեսութիւնը: «Հասանալիս է որ
ձեռքէ շատեր ծովու բաշխիքը անոր համար
կ'արհաւիրեն՝ որովհետեւ է'ն պզտիկ մէկ
սխալը առիթ կու տայ մեծաքանակ ջուր
կլկլալ, որով ամբողջ քիմքը իր ճաշակը կը
կորսնցնէ: Եւ կը կարծէք որ այդքան մը
ծովի ջուրը իր փառախարհ հեռքերը պիտի
ունենայ մարդու բոլոր կազմութեանը վրայ:
Ակամայ խեղճ ամէն անհաճոյ ունի աւելի՛

կը նպաստէ առողջութեան՝ քան ծովու բաշ-
խիքը՝ իր խեղճութեամբ:

«Սառցե է սակայն թէ ծովու ջուրը օդ-
առակար է՝ իրրեւ մեղմայնող շատ մը ներքին
հիւանդութեանց, գործունէութեան մէջ կը
գնէ՝ անկանոն լիարդ մը ու անշօք երկա-
մունքներ, եւ անբացատրելիօրէն կ'օդնէ՝
խառնակուած սասմոքսի մը: Իրրեւ գեղեց-
կայնող՝ ծովու ջուրը մեքենագործուած բո-
լոր քիմիական արտադրութիւններէն աւելի
գէր կը կառարէ, գէմքին ապուլ նուրբ եւ
յոտակ դժեր:» Յօդուածագիրը առթիւրը կը
թեկադրէ՝ կանոնաւորապէս խմել ծովու
ջուրը՝ ճաշէ առաջ կամ վերջը, եւ իրրեւ
դարման բերնի անհամութեան՝ լէմոնի օշա-
րակ խմել:

Մարգարիտ ուսկի՞ց կ'ելլէ. — Վերջին քըն-
նութիւնները կը ցուցնեն թէ լաւ մարդարիտ-
ները կը շինուին ոչ թէ խեցիկն մարմնոյն մէջ
հաւաքուած աւաղանիւղէներու կուտակումէն,
այլ diatoma կոչուած մանրէի մը յարձակու-
մէն: Մանրէն խեցիկն մէջ հիւանդութիւն
մը կը գոյայնէ, որ նախ փառութեան նշան-
ներ ցոյց կու տայ, յետոյ կարծրանալով՝ կը
մարդարանայ: Բոլոր մարդարիտները բա-
ղադրուած են՝ ջուրէ, կրածնային ածխածինէ,
(calcium carbonate) եւ արդէն խեցիկն
մէջ դնուած կենդանային նիւթերէ: Ներկայիս
մէջ մարդարտի վաճառականութիւնը տարին
600,000 անգլ. սակի կը հասնի: Մարգա-
րիտներու է'ն աղւոր նմոյշը՝ քանի մը տարի
առաջ Աւստրալիոյ ծովեզերքներէն գտնուե-
ցաւ: Ինը մարդարտահաւաքիչներ միայն ին
խաշի ձեւ մը ստանալով: Այդ մարդարիտը
80,000 անգլ. սակի ծախուեցաւ. եւ «Հա-
րաւային խաշ» անունով կը ճանչցուի:

Միլիոնաւոր բնահանոյթ. — Ամերիկացի ձե-
րակուտական Մր. Քլարք՝ ամբողջ արխարհի ու-
շաղըութեանը իր վրայ կը դարձնէ: Նիւ-Եորքի
մէջ ապարանք մը կառուցանելու վրայ է,
որուն համար կ'ըսեն թէ «քաններորդ դարու
հոյսայիք մը պիտի բլլայ»: Այս հոյսակող
շէնքը, համակ մարմարէ, է'ն աշխու քըն-
դակնելով աւ թանկագին նիւթներով գոր-
դարուած պիտի բլլայ: Ամէն տեսակ ծան-
-

րազին կահեր, անդրիններ, հնութիւններ, ասեղնադործութիւններ, հոն պիտի ամփոփուին: Ճաշարանին մէջ՝ կերակուրները փոխանակ սպասաւորներու ձեռքով մատակարարուելու՝ մոռական սեղաններ պիտի կատարեն ապառը, համադամ խորտիկներ լեցնելով սեղանին վրայ: Միլիոնաւոր Բլաքը և իր երկու աղջիկները քմահաճոյքը ունեցած են իրենց սպարանքին մէջ մտնելու ամէն նոր բան զոր մարդկային հանձարը կրնայ ծրագրել և դրամը զօրծաղրել: Այդ սպարանքը՝ Հազարուսեկ գլեթերմետուն և Սօնքե Փրիսքոյի ընդարձակ հասարակական մէջ նկարագրուած առատակական և վիպային անսարաններուն իրականացումը պիտի ըլլայ:

Վ. Ա. Գ.

ԱՅԾԵՄՆԻԿԻ ՓՈԽՆՁԸ

(Le bouquet de chevrefoilles)

ՎԷՊ ԱՆՏՐԷ ՔԵՕՐԻԷԻ

Թ. 2.

Այ պնդումը անյարմար կը դատէր ևս որքան կը ջանար զիս համոզել՝ այնքան ալ կը յամառէի ես մերժմանս մէջ: Կը զարմանայի որ այս պաշտօնեան որուն տարեկանը հազար սկուտի կը հասնէր, ինչպէ՞ս պէտք կ'ունենար 130 ֆրանք կանխավճարին: Չէի մտածեր թէ այս դումարը կրնար այնքան հարկաւոր ըլլալ Տարվիլի քնտնիքին որքան 35 ֆրանք ինծի՝ որուն պէտք ունէի մինչեւ ամսուն վերջը:

Յամառ պնդումիս հանդէպ, հարկահաւարը ստիպուեցաւ համակերպիլ: Բարկացայտ ժամացոյցին նայեցաւ, գլխարկը տուաւ ու դատուեցանք իրարմէ ցրտօրէն:

Բ

Մինակ մնալով՝ աշխատեցայ առանց շունչ առնելու մինչեւ ժամը վեց որպէս զի բոլորը կարգադրեմ ու ետքը մեկամաղձիկ՝ դաջի ճաշել պանդոկը ուրկէ վերադարձայ գրասենեակս:

Աշնանային վերջալոյսը քիչ մը տխրու-

թիւն կը բերէ միշտ հոգիին մէջ, մանաւանդ երբոր դժգոհ ենք օրուան անցուդարձէն: Որքան դիչերը կը մօտենար՝ այնքան անհանդիստ կը զգայի ինքզինքս: Բարկացած էի թէ՛ ինծի թէ՛ Տարվիլի դէմ հաւասարապէս: Պաշտօնակցի մը դոյզն ծառայութիւն մը մերժելու պէտքը կը ստորնացնէր զիս: Մինչդեռ կը մխրճուէի իմ խելիւս խորհուրդներուս ու մտածումներուս մէջ, անուշ բոյր մը կը փափայէր քիթս ու զիս հաճօքի մը մէջ կը զեզուէր: Միտքս եկաւ այժեմիկներու փոշիջը որ առտուն քաղուած՝ ու հոս հասածիս պէս նետուած, պարապ դարանի մը անկիւնը մոռցուած էր:

Այս բոյր ի բոյր հոտերը որոնք կարծես մարդագետիներէն ու ողողուն տարալիներէ կուգային կը զուարթացնէին զիս անդգալիօրէն: Շրագս վառեցի Որմնադարանի մը անկիւնէն հանեցի աւաղալից աման մը ուր պաղ ջուր լեցնելով բերի անոր մէջ զեռեղեցի թիթեակի թուփած ցօղունները: Ծաղիկներու առաքովը կազդուրուած՝ սկսայ պարպել անտուկս: Զգեստեղէններս տարի պատկից սննեակը որ ինծի պիտի ծառայէր իբրեւ ննջասեակ, յետոյ զիրք մը առի ու փորձեցի կարգաւ պարտէզին վրայ նստող բաց պատահանին առջև: Հազիւ թէ էջ մը դարձուցած էի, դուռս զարնուեցաւ մեղմօրէն:

— Մաէք...

Տեսայ այն տուն կէս լոյս դրան մէջ երկատարադ կնոջ մը յանկուցիչ դէմքը: Ան՝ ծանօթ այցելուէին անունը տուաւ: Տիկին Տարվիլն էր:

Գրեթէ 25 տարու, սիրուն, զեղահասակ, թուխ ու դանդաղաներ, իր նորակերտ հատակին մէջ, այժեմիկներու շփել նորութիւնէն բան մը տնէր կարծես այդ կինը: Փափուկ՝ ձուռձեղէն դէմք մը՝ խիստ մաքուր զծերով: Թիթեակի չարածձի ժպիտ մը իր դէմքին անկիւնները կը ծաղքոտէր, այսին վրայ փոսիկներ կը փարէր վարդազոյն ալժգունութեամբ, ու ինչ սև աչուքները կը փալվելէին սիրովառ թերաստուերին մէջ:

— Լսյո տեսայ ձեր սենեակը, Պարոն, բոստ, ներսութիւն խնդրելով, ու ստիպուեցայ զալ յանձնելու համար բանալիները ձեր

յարկարաժինին, որովհետեւ պիտի մեկնիմքիչ ասեմէն: Քանի մը օր բարեկամներու տուն անցանելէ ետքը պիտի վերադառնամ մեր փոխադրութեան գործին զբաղելու, մինչև որ ամուսինս իր նոր պաշտօնասեղին բնակարան մը գտնէ:

Ասանկ ուշ ատեն այսպիսի անակնկալ այցելութիւն մը հեշտազին յուզում մը կ'առնէր ինծի: Ձեռք դիտել ինչ ունէր վերային՝ որ կը զբաղէր երկոստարդական երեւակայութիւնս: Քանի տաղուան ինքնաճանձ ցաւակնութեամբ մը՝ երկոստարդ կնոջ ընթացքը զգացական հեռաքրքրութեան մը վերադրել կ'ուզէի: Եթէ բնակարանին բանալիները պիտի բերէր ինծի, ուրիշ բանի մը համար չէր՝ այլ միայն զիս անձամբ ճանչնալու, եթէ ոչ, իր ազատիսին հետ ալ կրնար զրկել: Այս ենթադրութիւնով կը հպարտանայի:

Տեղէն վեր ցատկեցի խիստ փութկոտ: Բանալիներուն տրցակը դրաւ սեղանին վրայ, յետոյ զարմացումի յայտնի արտայայտանքով մը պահ մը քննեց երեսու վերէն վար:

Ամուսինը անտարակոյս ներկայացուցած էր զիս իբրեւ լրբախօս կողիս մէկը, ու զարմացած կ'երեւար զի հայր տեսնելով երկօտաւարդ ուղայ մը, քաղցր ու երկնոտ, մեւ լափալձիկ անփայլ գոյնով ու նորածիլ ալեխերով: Այժմեմեկի փունջը՝ որ այն պահունքով կը գտնուէր՝ կարծես նպատաւորեց զիս, որովհետեւ իր երեսը նախապէս լուրջ ու խոփո՛ւ պարզուեցաւ ու ժպտեցաւ, չարժուփով մը մերժելով աթոռը զոր իրեն կը հրամայէի:

— Զարմեր, մրմնջեց.

Պահ մը ինքզինքը ժողովեց, թոթովող պրկում մը վեր վերցուց չարածձիօրէն իր շրթունքներուն անկիւնները. յետոյ կրկնեց յանդիմանութեան նուրբ երանգով մը.

— Ազնիւ չէք գտնուած մերժելով ինչ որ կը խնդրէր Պ. Տարվիլ, որոք բան մըն էր սակայն:

Ան ալ կը հաստատէր թէ լաւ վարուած չէի տեսչական կարասիներուն նկատմամբ ու առիկա կը մահալայէր զիս անգլխօրէն: Որքան որ ամուսնոյս դժգոհութիւնը զիս պաղեցուցած էր՝ այնքան ալ հիմա, այս սիրուն կնոջ

յանդիմանութիւններէն կը զգածուէի: Շատ ծանր պիտի դար ինծի երբոր տեսնէի թէ ան կը հեռանար տանկով հետը խեղճուկրակ կարծիք մը իմ վրայով ու զիս կծծի ու կոպիտ մէկուն տեղը կը դնէր: Երանի թէ արժանապատուութիւնս վերադարձէր քան թէ անոր քով այսքան տոբնանայի:

Երգում ըրի իրեն, զրեթէ աչքերս արցունքով, որ իմ կողմէ ոչ կծծիութիւն եւ ո'չ ալ չարակախութիւն կար: Վերջապէս խոստովանեցայ կարմրելով՝ մերժումիս բուն պատճառը:

— Աստուած իմ, Տիկին, մրմնայի, հաւատացէք, լաւաւոյն կը համարիմ ձեզի համարձակ խօսիլ . . . որտանց 130 ֆրանքը պիտի տայի Պ. Տարվիլ . . . եթէ ունենայի . . . դժբախդարար հարուստ չեմ: Մեկնած ատենս հայրս քսակս շատ նիհար թողուց, ու քովս ձիւդ ամսուան մը ապրելիք ստակ ունիմ միայն:

Խիստ յուզուած ու խոցուած էի դրամական անձկութիւնս խոստովանելով անոր որ գլխաց վրաս: Տարապայման յուզմանս մէջ հապկեալ որ անկեղծ էի, ուստի ինքն ալ զգածուած երեւցաւ: Համակրանքի ժպտով մը կէս մը բացաւ չարածձի բերանը:

— Անցնի՛ք, անցնի՛ք ատոր վրայէն, որուայ ձեռքովը թեւս շոյելով, մի՛ տխրիր ատոր համար . . . ստակի ցաւը մահացուցաւ մը չէ, չարժեր որ ատոր համար վրձտանա՞մ ձեզմէ:

Եւ խօսած միջոցին՝ չվշտանալը գործով ալ ցոյց տալու համար անշուշտ, աթոռին վրայ նստաւ:

Ճրագին կարմիր լոյսովը կրնայի հիմա գտնի գիտել լիովին, սեւ գուլպաներ հաւած ոտքերէն, վրան փակած չրջազգեստէն ու սեւ ստուիէ բաձկոնի մը մէջ ամբարիակւած շնորհագեղ իրանէն մինչև իր նրբաւարտ գլուխը, որուն վրայ թուխ ու խիտ մազերը գանգրաճիւս կը փալիլէին գորշագոյն թաղիքէ գլխարկի մը տակ: Բազուկովը կրթնած սեղանին, ատեն ատեն կը դարձնէր իր սիրուն երեսը գէտ ի այժմեմեկի փունջը որուն զգլխիչ բուրումներուն մէջ կ'ընկղմէր: Այսպէս ծաղիկներուն վրայ ծը-

աւած՝ զանանք այտերուն քսելով՝ շարու-
նակեց .

—Ուրեմն ձեր ընտանիքը նեղե՞լ է՝ աւել-
ձեղի... հասկեցայ . ես երբեք երես առած
չէի հօրս տունը եւ ուզածս երբեք չէի կըր-
նար ընել... :

Յետոյ կցրտութիւնը կերպով մը, ընդհատե-
լով խօսքը ամէն վայրկեան՝ այծեմնիկները
հոտառելու կամ բարձրաձայն խնդալու հա-
մար, պատմեց ինծի իր երիտասարդ աղջկան
տաղտուկները ու իր անսովորական սովու-
րայթները հայրական յարկին տակ : Բնա՛ւ
սղարահանդէս, ընտա՛ պոսյոս քաղքին մէջ :
Մայրը կը ստիպէր միշտ անական զործերով
ղբալիլ ու կէս օրէն ետքը կար կը կարէր
սրտառահման մը առջեւ որուն վարդապետներն
անգամ վերցնելու թոյլտուութիւն չէր ըւ-
լար, որպէս զի փողոցին հաղուաղէպ ան-
ցորդները գիտէ : Այդ անձուկ ու տաղտալի
կեանքէն ազատելու նպատակաւ տանընտե-
ր տարեկան հասակին մէջ ամուսնայած էր Պ.
Տարվիլի հետ :

—Աւա՛ղ, հաւաքեց ջղախտութեամբ մը
չըջաղկեալին ծաղիկները բանալով, չէի կտա-
կածեր արդէն թէ վիճակս ի՞նչ պիտի ըլլար :
Յարախորիս վիճակ մը ունի ամուսինս :
Այսօր հոս, վաղը հնա, ամառականները քիչ,
ու երիտասարդութեան զեղեցկազոյն օրերը
կ'անցնին զիւզերու անկիւնը՝ ուր զրօսանք-
ները հաղուաղիւս են, սուսնոց հաշուելու
այն սովորականութիւնը զոր ունինք ակ-
ւանիս սեղմելու որ աւելորդ ծախք չընենք
եւ հաղիւ ծայրը ծայրին կրնանք հասցնել : Կը
վախնամ որ միտկանի ձիս կոյրի մը հետ կը
փոխանակենք, ասկէ աւելի զէշ վիճակի մը
մէջ խնայով :

Կը խնդար նորէն ու կը հարցաքննէր զիս
հետաքրքրութեամբ, ի՞նչ կերպ մեծնալուս եւ
կրթեւ երիտասարդ ի՞նչ հաճոյք, ի՞նչ ճաշակ
ունենալուս վրայ : Ու հարցաւորօրծի միջոցին
գուրգուրալից թաշկոյտ աշուրները կը յուռէր
խմբներուս վրայ, չարամձիի չրթունքները
կէս մը կը բացուէին ժպտելու համար մտեր-
մական չարժուծեւերուս վրայ :

Ընտանի վտառհոթիւնը որ կը հաստա-
տուէր քիչ քիչ մեր մէջը, մեր առանձին տե-

տակցութեան զաղանիքը, հրապուրիչ նայ-
ուածքին մազնխտական ձգողութիւնը, այծեմ-
նիկներու թափանցող անուշահոտութիւնը,
բոլոր ասանք արեւցտեցիչ բնակիչի մը նման,
զիս կը գինովցնէին : Այն պահուն ուր կը
խոտառվանէի բանաստեղծական ճաշակս,
ըսաւ ինծի .

—Ո՛հ, տառաւոր ալ կը դրէք, իրաւ
կ'ըսեմ որ դուք սիրահար ալ էք :

Այս ժպտուն եւ խաղաղիւս նայուածքը
հեշտօրէն զիս տակնուվրայ կ'ընէր ու մեղմօ-
րօր յուզման մը մէջ կ'ընկղմէր : Մէկ խօս-
քով, փորձուեցայ դուելու Տիկին Տարվիլի,
սուքերը խնայով .

—Սիրահար եմ... ձեզի ու խնդս դըլ-
կէս կ'երթայ ձեզի համար... :

Յանկարծ լսիկ փողոցին մէջ անխի մը
թաւալումը ու զանգակի թինդը բառեցաւ :
Մանկամարդ կինը սուքի վրայ ելաւ :

—Կաւքը կելու, պէտք է մեկնիլ :—Այս-
քան չուաւ—Այո՛, պէտք է համիմ Մէլզօն
Պլանչ, Պորտոյի կառուղւոյն անցքին համար,
ու կը ցատիմ որ զձեզ այսչափ շուտ պիտի
թողում :—Ո՛հ, միտապի, կեկորդ սեղմուած,
ինչո՞ւ կը մեկնիք, ինչո՞ւ մնաք բացով կ'ը-
սէք... :—Մնաք բացով չէ առ, կրկնեց խն-
դալով, ու աչք ընկելով պատիւր նայուածքով
մը, շաշթուն վերջը պիտի վերադառնամ, ու
զձեզ վերստին անանելու հաճոյքը պիտի վա-
րկեմ զեւ վերջնական մեկնումէն առաջ :

—Այս բաժանումը զիս խորապէս կը խոցէ :

Ուժեղնօրէն ձեւերը բռնեցի, սեղմեցի
խմբներուս մէջ, իրր թէ թող չտալու հա-
մար :—Ելե՛նք էք, ըսաւ թեթեւ դողդոջուն
ձայնով մը... Չէր քաշեր տակաջն ձեւերը,
ընդհակառակը ինծի աջապէս կուգար որ ինքն
ալ կը սեղմէր խմբներս մտերմօրէն :

—Կը սիրեմ զձեզ, թոթովեցի, կը փա-
վաքէի ձեզի հուրիւղ կեանքս :

—Ո՛հ, կը չարաղանցէք, կրկնեց փափուկ
հեղանակաւ ժպտով մը : Նայե՛, միտայն այ-
ծեմնիկները տուր ինծի... թո՛ղ ճաղրաւ բն-
կերներս բլլան ասանք ու հոտառելով՝ մաս-
ծեմ քու վրայ :

Շուտ մը ամանին մէջէն հանեց ցօղոտ

ծաղիկները, թաշկինակին մէջ փաթկեց զանոնք, յետոյ գլուխը շարժելով աղնուօրէն երկնցուց ձեռքը՝ որուն վրայ դրոշմեցի դողդոջուն չրթունքներս :

— Յետեւեթիւն, փափաց ձեռքը քաշելով :

Ու դուռը բանալով կէս մը աներեւոյթ եղաւ . . . :

(Շարունակելի)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ծնունդի օճիկն առքիւ երկուշաբթի առաւօտ Մայր Եկեղեցւոյ մէջ կատարուած արարողութիւնը սա մանրամասնութիւններով կը նկարագրէ Բիւզանդիոն, իր երեքշաբթի թիւով :

«Ամեն. Տ. Մաղաքիա Ս. Պատրիարք Հայրը կիրակի իրիկունը Գոմ Գաբու անցուց, և Մայր Եկեղեցւոյ մէջ նախադանեց ճրագալոյցի արարողութեանց : Երէկ, Տեառն մերոյ Ս. Ծննդեան և Մկրտութեան տօնին առթիւ, կանուխէն սկսան արարողութիւնք : Փառք ի բարձունք, օրուան մեծ երգը, շատ գեղեցիկ երգեցին Մայր Եկեղեցւոյ զպիրք, ձայնակցութեամբ գրէթէ բոլոր ժողովրդեան : Տակաւին մութ էր դուռը, ինչպէս կը վայլէ Ս. Ծննդեան առաւօտուն, երբ Ն. Սրբազնութիւնը զգեստաւորուեցաւ . . . Խորհուրդ խորինը գեղգեղածայն երգուեցաւ, համակ լուսաղարջուած Մայր Տաճարին սպիտակ և ոսկեգոյն սիւները, խոյակները, դըրուազները, ձեղունը, Աւագ Խորանը, և Պատրիարքական նորաբնաւ զարդարուած Աթոռը կը շողային լոյսերու մէջ : Գրէթէ տառնը՛նիւզ տարիէ ի վեր նմանը չառնուած ձիւն մը կը անդար մայրաքաղաքին մէջ, ճամբաները ձեան կոյտերու ներքեւ գացուած էին, արուարձաններու հետ հաղորդակցութիւնք ըստ մեծի մասին կտրուած էին, կառքերն ալ չէին բաներ, և ասով հանդերձ, Պատրիարքական աւագ թաղին բարեպաշտ ժողովուրդը գրէթէ լեցուցած էր եկեղեցին արշալոյսէն շատ առաջ, միայն փափուկ սեւը, իր աւանդական եկեղեցաւէր սովորոյթներուն հակառակ, պակաս թիւ մը կը ցուցադրէր :

Ս. Պատարագին սկզբնաւորման, ինչպէս կը պատահի Ս. Ծննդի տօնին : Եկած կիներն ու աղջիկներն առ հասարակ պատարարուած էին հաստ վերարկուներու և շաւերու տակ, աւելի տաքնալու քան վայելուչ երեւոյթութեամբ սարած ըլլալով խոհեմաբար : Բազմութեան երեւոյթութեամբ կանոնաւորելու համար, ուրիշ տարիներու պէս, ըստ սովորութեան, բարապաններն ու ոստիկանութեան ջոկատ մը կը հսկէին եկեղեցիին նորաբնաւ և բարեպաշտուած դրան առջեւ : Պատարագն սկսած էր արդէն, և Ս. Պատրիարք Հայրը, փառաւոր թափօրի մը զլուին անցած, Մայր-Տաճարին շրջանն ըրաւ յա երաքայլ, բուրձաւի ձեռքն, Պատրիարքներու յատուկ սեղեհուածանք զգեստներն հագած, օրք յիշատակն են մեծանուն Պէղծեան Ամբարշտին : Զորհեալ հանդէսը կաաարեց Տ. Գեորգ Սրբազան : Յաւաշտ արարողութեանց, բարեմաղթութիւններ եղան վեհ. Կայսեր համար, ինչպէս նաեւ ուրիշ ամէն եկեղեցեաց մէջ» :

— Երեքշաբթի օրը, պետական անձնաւորութեանց ներկայացուցիչներ, հոգեւոր պետերու փոխանորդներ, ինչպէս նաեւ Վարչական Ժողովներու, Տեսուչ Խորհուրդներու անդամներ, Խնամակալութեանց և Թաղ. Խորհուրդներու ղեկաններ, եպիսկոպոսներ, վարդապետներ, աւագերէցիներ և զանազան դատակարգի աշխարհականներ՝ ըստ սովորութեան Պատրիարքարան այցելեցին ի հնորաւորութիւն Ծննդեան տօնին : Ս. Պատրիարք Հօր արուած հնորաւորական այցելութիւնները շարունակուեցան նաեւ Հորեքշաբթի և հինգշաբթի օրերը, ինչպէս հրատարակեցին օրաթերթերը :

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑ

Ս. Փ. ՀԻՒԱՆՇԻԱՆՈՅԻՆ

1903 ՏԱՐԻՈՅ

Հրատարակուեցաւ Ս. Փրկչեան Հիւանդանոցի ընդարձակ նոր օրացոյցը նորագոյն եւ ճօխ ու կարեւոր պարունակութեամբ, որ այս անգամ պատրաստ

տուած է կարեւոր տեղերէ ստացուած հրահանգաց համաձայն :

Տոմարի բաժինը կը պարունակէ սովորական օրացոյցը, արական եւ իգական անուններու տօնախմբութեանց օրերը՝ աւելի ճոխացած, փոփոխուած անուններու յաւելուած մը, անցած հինգ եւ գալիք հինգ տարիներու համառօտ օրացոյցը, հին ու նոր եւ ուրիշ գործածական տոմարներու վերաբերեալ տեղեկութիւններ :

Ընդհանուր գիտելիքներու մասին մէջ կը գտնուին տիեզերական պատմութեան վերաբերեալ նշանաւոր թուականներ եւ վերջին դարերու հայ տարեգրութիւններէն քաղուած եկեղեցական, դպրոցական, բարեգործական, գրական, գիտական եւ արուեստագիտական թուականներ, ինչպէս նաեւ աշխարհագրական համառօտ ծանօթութիւններ եւ աշխարհի վեհապետաց ծննդեան եւ գահակալութեան թուականներ :

Պետական Վիճակագրութեան բաժնին մէջ կը գտնուին Օսմանեան գահուն Օգոստոսիառ ինքնակալաց անունները եւ թուականները, Օսմանեան կայսրութեան ամփոփ աշխարհագրութիւնը, նախարարութիւնը, մեծ պաշտօնէութիւնը, Հայ աստիճանաւորները եւ Հայ պաշտօնատարները :

Հայ. Եկեղեցւոյ բաժնին մէջ դրուած են ամենայն Հայոց կաթողիկոսութեան, ինչպէս նաեւ կրիկիոյ, Աղթամարի, Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ աթոռներուն գաւազանագիրքը, Թուրքիոյ Հայոց Պատրիարքարանը, Թաղօրայք Մայրաքաղաքիս, Առաջնորդական վիճակներ Պատրիարքութեան եւ ուրիշ տեղերու : Ասոնցմէ զատ նշանակուած են նաեւ Հայ Հռոմէական, Հայ բողոքական ու Թուրքիոյ արեւելեան Դիստոնեայ Հասարակութեանց հոգեւոր պետերը եւ անոնց վարչութիւնները :

Իբր յաւելուած՝ դրուած են նաեւ տպագրական նիւթերու մէջ տեղի ունեցած փոփոխութիւնք, նիւթոց ցանկ, ըն-

դարձակ այբբենական ցուցակ մը ու աղ-դեր :

Հոգաբարձութիւնս, որ Հիւանդանոցի ընդարձակ օրացոյցին քանի տարիների վեր գտած ընդունելութիւնէն քաջաւերուած՝ ինքն ալ իր կողմանէ ամէն ջանք ի գործ կը դնէ սոյն կարեւոր հրատարակութիւնն հետզհետէ աւելի օգտաշատ եւ շահեկան ընծայել, կը յուսայ թէ Հասարակութիւնը այս անգամ եւս դնահատելով անոր կարեւորութիւնը, մանաւանդ ի նկատի առնելով գոյացեալ հասոյթին՝ Հաստատութեանս վերաբերիլը, պիտի հաճի պէտք եղածին չափ գնել անկից, որ դարձեալ 10 դրշ. ի կը ծախուի Հիւանդանոցիս գրասենեակը, Մեծ նոր խան եւ բոլոր գրավաճառացքով :

(Հոգաբարձութիւն)

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ս Կ Ի Ի Տ Ա Ր

Ամերիկեան Վարժարանին Բ. Շրջանը կը սկսի 1903 փետր. 1 (Ն. Տ.) : Գիշերօթիկներու տարեթուական է 35 օսմ. ոսկի Ուսումնարանին չորս դասընթացքներուն համար, իսկ 30՝ նախակրթարանին համար : Տնօրէնութիւնը ջանք է խնայած վարժարանն ամէն առաւելութիւններով օժտելու : Հաւագոյն դրութիւնով եւ մեծ յաջողակութիւնով կ'ուսուցուին Հայ. Ֆրանս. Անգլ. Գերմ. եւ դասական լեզուները. ինչպէս նաեւ քնական գիտութիւններ, Հմուտ եւ վարժ հիւանդապահունիի մը աշակուրջ հսկողութիւնը կը վայելեն աշակերտուհիները եւ կ'ապրին խաղաղ ու բարեկարգ միջնորոտի մը մէջ : Կանոնաւոր դասընթացքի մը հետեւելու համար զիւրութիւններ պիտի ընծայուին անոնց որք կը փափաքին Բ. Շրջանին աշակերտիլ վարժարանիս : Աւելի տեղեկութիւններու համար դիմել վարժարանին Տնօրէնուհի Տր. Բէթրիքի :

2-4

Արսոցաքեր Կ. Ս. ԻիթիիճեԱն

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի